ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

27 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու թվով 10 (տասս)

անդամներ:

Բացակա էին՝ Կ. Դարբինյանը, Հ. Մելքոնյանը, Բ. Մինասյանը, Ֆ. Պարսյանը, Ա. Ավետիսյանը:

Նիստի աշխատանքներին մասնակցում է **նաև «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության փորձագետ Մարի Մելքոնյանը:**

Նիստի աշխատանքներին չի մասնակցում **«Ազատական» խմբակցության գործավար Մերի Քարամյանը:**

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Հ. Դանիելյանը, Հ. Հարությունյանը, Մ. Օհանյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հ. Ավետիսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Դանիելյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

ավագանին որոշում է՝

1.Հաստատել 27-ը հոկտեմբերի 2023թ. թիվ 10 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2023թ. երրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին,

3.Եղեգիս համայնքի մի խումբ բնակիչների ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին,

4.«Սյունիք - Զարգացում» Համայնքային ՀԿ-ի հետ կնքված ենթադրամաշնորհի պայմանագրին հավանություն տալու մասին,

5.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքին պատկանող, Թառաթումբ գյուղի վարչական ղեկավարի նստավայրի գրադարանում գտնվող գրքերը եվ գրքերի գրադարակներն անորոշ ժամկետով «Թառաթումբի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրամադրելու մասին,

6.Եղեգիս համայնքի ավագանու 08/09/2022թ. թիվ 103Ա, 24/03/2023 թ. թիվ 28Ա, 31/05/2023թ. թիվ 75Ա և 20/09/2023թ. թիվ 117Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին,

7.Քաղաքացի Օֆելյա Մանուկյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

8.Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

9.Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

10.Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերն աճուրդային կարգով օտարելու մասին,

11.Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

12.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

13.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

14.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղային հանքերևակման տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար մրցութային կարգով պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին,

15.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղային հանքերևակման տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար մրցութային կարգով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին,

16.Արտաբույնք գյուղի գերեզմանոցը շրջապատող բարդիները հատելու քննարկման մասին,

17.Եղեգիս համայնքի ավագանու 31/05/2023թ. թիվ 76Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին,

18.Եղեգիս համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի երրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին,

19.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

20.Եղեգիս համայնքում արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման համար հողամասի գնումը անհետաձգելի համարելու մասին:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 129Ա/

Հ. Ամրոյանը և Մ. Ամրոյանը վարձի աշխատավարձերը ճանաչվել են օրինական խախտումով հնգր:

Լսեցին

ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, **ավագանին որոշում է՝**

Ընդունել ի գիտություն Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2023թ. երրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 2 Հ. Ամրոյանը, Մ. Ամրոյանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 130Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Հ. Պարսեղյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 24/10/2019 թվականի թիվ 72Ն որոշումը, Եղեգիս համայնքի ավագանու 08/12/2022թ. թիվ 136Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը, ***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն սույն որոշման կից հավելվածներով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրելու ֆինանսական օգնություն:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 131Ա/

Լսեցին

«ՍՅՈՒՆԻՔ-ՋԱՐԳԱՑՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԿ-Ի ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ***ավագանին որոշում է՝***

Տալ հավանություն «Սյունիք - Զարգացում» Համայնքային ՀԿ-ի հետ կնքված ենթադրամաշնորհի պայմանագրին, ըստ որի 3200900 (երեք միլիոն երկու հարյուր հազար ինը հարյուր) ՀՀ դրամի չափով ենթադրամաշնորհի ընդհանուր գումարը փոխանցվում է Եղեգիս համայնքի բյուջեի Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից հոդվածին, որը նպատակաուղղվելու է համայնքային բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 01.06.01 ոլորտի՝

4251- շենքեր և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածին՝ 1 036 900 ՀՀ դրամ,

4239- ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածին՝ 450 000 ՀՀ դրամ:

Մնացած 1 714 000 ՀՀ դրամը նպատակաուղղել համայնքի վարչական բյուջեի

11.01.02 51 պահուստային ֆոնդ՝ տնտեսագիտական դասակարգման 4891- պահուստային միջոցներ հոդվածին: Այնուհետև ավելացնել համայնքի բյուջեի եկամուտներ (հատված 1) 1392 տող՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր հոդվածին և նպատակաուղղել գործառնական դասակարգման 01.06.01- ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի 5122 - վարչական սարքավորումներ հոդվածին:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 132Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ, ԹԱՌԱԹՈՒՄԲ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՐՔԵՐԸ ԵՎ ԳՐՔԵՐԻ ԳՐԱԴԱՐԱԿՆԵՐՆ ԱՆՈՐՈՇ ԺԱՄԿԵՏՈՎ «ԹԱՌԱԹՈՒՄԲԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՐԱՉՅԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական ղեկավարի նստավայրի գրադարանում է գտնվում Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող 5373 հատ գիրք և գրքերի 39 հատ մետաղից գրադարակներ: Թառաթումբի գրադարանը տարիներ շարունակ գրադարանավար չի ունեցել, հնարավոր չի եղել գրքերը տրամադրել ընթերցասեր բնակչությանը և դպրոցական երեխաներին, ինչն աշխարհընկալման և գիտելիքների ձեռք բերման դերում բացասական է անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով

ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական ղեկավարի նստավայրի գրադարանում գտնվող, Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող 5373 հատ գրքերը և գրքերի 39 հատ մետաղից գրադարակներն անհատույց, անորոշ ժամկետով օգտագործման հանձնել Եղեգիս համայնքի «Վայոց ձորի մարզի Թառաթումբի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ին:

2.Սույն որոշման պահանջները կատարել որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում և որոշման պահանջների կատարումը հանձնարարել Եղեգիս համայնքի ղեկավարի 1-ին տեղակալին և Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական ղեկավարին:

3.Որոշման գործողությունը տարածվում է մինչև, անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարի պահանջով գրքերը գրադարանին վերադարձնելը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 1 Ա. Սերգեյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 133Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08/09/2022Թ. ԹԻՎ 103Ա, 24/03/2023 Թ. ԹԻՎ 28Ա, 31/05/2023Թ. ԹԻՎ 75Ա ԵՎ 20/09/2023Թ. ԹԻՎ 117Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին, 3)-րդ կետերի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Եղեգիս համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 8-ի «Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացիների և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» թիվ 103Ա որոշման 5-րդ մասում «0,23081հա մակերեսով, 10-029-0574-0001 կադաստրային

ծածկագրով» բառերը և թվերը փոխարինել «0,20081հա մակերեսով, 10-029-0574-0004 կադաստրային ծածկագրով» բառերով և թվերով:

2.Եղեգիս համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 24-ի «Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը և հողամասի վրա գտնվող ավտոտնակները, ծածկը կառուցապատող Մխիթար Խաչիկի Վարդանյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին» թիվ 28Ա որոշման բովանդակության մեջ «63996,9 (վաթսուներեք հազար ինը հարյուր իննսունվեց ամբողջ ինը տասնորդական) ՀՀ դրամ» թիվը և բառերը փոխարինել «78797 (յոթանասունութ հազար յոթ հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամ» թվով և բառերով:

3.Եղեգիս համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 31-ի «Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով տրամադրելու մասին» թիվ 75Ա որոշման բովանդակության 1-ին մասը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ՝

«1.Թույլատրել Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելու ստորև ներկայացված հողերը՝

1)արոտավայր հողատեսք, կադաստրային ծածկագիր 10-029-0136-0006, մակերեսը 237,12999հա,

2)այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր 10-029-0105-0020, մակերեսը 29,21801հա,

3)արոտավայր, այլ հողատեսքեր, կադաստրային ծածկագիր 10-029-0105-0023, մակերեսը 272,91379հա, որից արոտավայր 262,9846հա, այլ հողատեսք 9,92919 հա,

4)արոտավայր, այլ հողատեսքեր, կադաստրային ծածկագիր 10-029-0136-0001, մակերեսը 1017,1971հա, որից արոտավայր 715,93021հա, այլ հողատեսք 301,26689 հա,

5)խոտհարք հողատեսք, կադաստրային ծածկագիր 10-029-0136-0005 , մակերեսը 20,77496հա:

Ընդամենը՝ 1577,23385հա:»:

4.Եղեգիս համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 20-ի «Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1,17305 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին» թիվ 117Ա որոշման բովանդակությունում «10-021-0009-» թվերը փոփարինել «10-021-0106-0009» թվերով:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 2 Հ. Մ[illegible]
Ս. Մ[illegible]

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 134Ա/

Լսեցին

ՔԱՂԱՔԱՑԻ ՕՖԵԼՅԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին մասի 9-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները, ***ավագանին որոշում է՝***

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Եղեգիս գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Օֆելյա Մանուկյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքը (0,23887հա մակերեսով, 10-021-0114-0005 կադաստրային ծածկագրով) փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման (բնակելի տուն կառուցելու նպատակով):

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 1 Հ. Հմայակյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 135Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՂԹԱՆԻԿԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի

Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-018-0008-0006, մակերեսը 0,22972հա:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 (մեկ հարյուր) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 2 Հ. Սմբատյան Ա. Սմբատյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 136Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-021-0107-0006 , մակերեսը 1,4հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 200 (երկու հարյուր) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 2 Ձեռնպահ- 0

Հ. Սմբատյան
Ա. Սմբատյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 137Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՂԹԱՆԻԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերն աճուրդով օտարելու մասին. կադաստրային ծածկագիր 10-018-0148-0033, մակերեսը 0,70694հա, կադաստրային ծածկագիր 10-018-0101-0012 , մակերեսը 0,80684հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 (մեկ հարյուր) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 0 Դեմ- 8 Ձեռնպահ- 2 Ա. Ղեմբարյան
Մ. Ղեմբարյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 138Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՂԹԱՆԻԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, վարելահողը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

կադաստրային ծածկագիր՝ 10-018-0125-0023, մակերեսը՝ 3,10879 հա, որից վարելահող 1,31724հա և այլ հողատեսք 1,79155հա:

2.Մեկնարկային գին սահմանել վարձակալության 150 (մեկ հարյուր հիսուն) տոկոսը:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 139Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-035-0001-0120, մակերեսը 0,33014հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 (մեկ հարյուր) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 0 Դեմ- 8 Ձեռնպահ- 2 Հ. Ամբարձումյան, Ա. Ամբարձումյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 140Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՌԱԹՈՒՄԲ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

կադաստրային ծածկագիր՝ 10-024-0109-0073 , մակերեսը՝ 0,47291 հա:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 120 (մեկ հարյուր քսան դրամ) տոկոսը:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 0 Դեմ- 8 Ձեռնպահ- 2 Ն. Ավետիսյան, Հ. Ավետիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 141Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԱՋՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԵՐԵՎԱԿՄԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 14/01/2010 թվականի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N16-Ն որոշման 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող ստորև ներկայացված գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր

հողատեսքերը երեք տարի ժամկետով մրցութային կարգով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով տրամադրելուն՝

1)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0239, մակերեսը 3,4855հա,

2)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0172, մակերեսը 68,4593հա,

3)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0240, մակերեսը 4,6816հա,

4)կադաստրային ծածկագիր 10-041-0551-0001, մակերեսը 63,6282հա,

5)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0002, մակերեսը 49,7312հա,

6)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0017, մակերեսը 33,1763հա,

7)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0004, մակերեսը 14,9966հա,

8)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0007, մակերեսը 45,0հա,

9)կադաստրային ծածկագիր 10-041-0608-0042, մակերեսը 96,32385հա,

10)կադաստրային ծածկագիր 10-041-0608-0041, մակերեսը 310,7666հա,

11)կադաստրային ծածկագիր 10-041-0608-0040, մակերեսը 130,4622հա,

12)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0238, մակերեսը 34,0134հա,

13)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0018, մակերեսը 35,54741հա:

Ընդհանուր տարածքը 890,27216 հա:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 120 (տող հարյուր քսան) տոկոսը:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 2 Դեմ- 2 Ձեռնպահ- 6

Ա. Ավետիսյան Գ. Մարտիրոսյան

Հ. Ավետիսյան Հ. Մարտիրոսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 142Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԱՀՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԵՐԵՎԱԿՄԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով

ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ստորև ներկայացված գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքերը երեք տարի ժամկետով մրցութային կարգով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով տրամադրելուն՝

1)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0241, մակերեսը 227,6956հա,

2)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0242, մակերեսը 11,6498հա:

ընդհանուր մակերես 239,3454 հա:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 120 (հարյուր քսան) տոկոսը:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 2 Դեմ- 2 Ձեռնպահ- 6

Ս. Սմբատյան Ջ. Մարգարյան
Կ. Սմբատյան Զ. Մարգարյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 143Ա/

Լսեցին

ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ԳՅՈՒՂԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԲԱՐԴԻՆԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ կետով, և հաշվի առնելով այն փաստը, որ Արտաբույնք գյուղի գերեզմանոցը շրջապատող բարդիները քամու դեպքում իրական վտանգ են ներկայացնում գերեզմանների շիրմաքարերի վնասմանը, ***ավագանին որոշում է՝***

1.Հանձնարարել համայնքի ղեկավարին կազմակերպելու բոլոր բարդիների հատման գործընթացը:

2.Բարդիների տեղում իրականացնել կանաչապատում՝ այլ ցածր թփուտներով:

Կողմ- 8 Դեմ- 1 Ձեռնպահ- 1 Ս. Սմբատյան
Կ. Սմբատյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 144Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 31/05/2023Թ. ԹԻՎ 76Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասով, ***ավագանին որոշում է՝***

Անվավեր ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու «Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով բնապահպանական նպատակներով տրամադրելու մասին» 31-ը մայիսի 2023 թվականի թիվ 76Ա որոշումը:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 2 Հ. Աբրահամյան Ա. Աբրահամյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 145Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, ***ավագանին որոշում է՝***

Եղեգիս համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի երրորդ նիստի գումարման օր սահմանել 2023 թվականի նոյեմբերի 24 -ին, ժամը 15:00-ին:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 146Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

կադաստրային ծածկագիր՝ 10-029-0125-0012 , մակերեսը՝ 0,73 հա:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 120 (մեկ հարյուր քսան) տոկոսը:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 0 Դեմ- 8 Ձեռնպահ- 2 Հ. Ամբարյան
Ս. Ամբարյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 147Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՆՈՒՄԸ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Անհետաձգելի համարել Եղեգիս համայնքում արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման համար հողամասի գնումը:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ համապատասխան որոշմամբ թույլ տալու սույն որոշման 1-ին կետում նշված գնումը կատարելու մեկ անձից՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 71-րդ կետի 1-ին ենթակետի «ա», «բ», «գ», «դ» պարբերությունների պահանջները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 148Ա/

Ավագանու անդամներ՝

Ստեփանյան Արթուր

Մարտիրոսյան Նարեկ

Մարտիրոսյան Զոյա

Հակոբյան Արտուշ

Պողոսյան Հրաչյա

Մանուկյան Սաթինե

Նազարյան Արգիշտի

Ղահրամանյան Վարդան

Գաբրիելյան Ահարոն

Սմբատյան Մամիկոն

Հարությունյան Կարեն

Սմբատյան Արսեն

Ստեփանյան Սաշա

Միքայելյան Քրիստինա

Թանբասյան Վասիե

Նիստն արձանագրեց՝ Աննա Դանիելյանը